



Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԵՐՈՍՆԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ «ԱՆՔԱՌԱՄ ՍԻՐՈՅ ԾՆՈՒՆԴՔ» ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԿԱՆԻ ՇԵՂԵՆԱԿԸ

Վարդանանց նվիրված երգերն ու շարականները սկսվել են դրվել ժԲ դարից և դեռ շարունակվում են մինչև մեր օրերը: Առաջին անգամ արևելյան Հայաստանում Հովհաննես Սարկավազ վարդապետն է Ղևոնդյանց նվիրում իր նշանավոր, բովանդակալից «Պայծառացան այսօր»¹ շարականը: Այնուհետև, նույն շրջանում, Կիլիկիայում, Ներսես Շնորհալին է գրում Վարդանանց քաջերին ձոնված մի քանի շարականներ, որոնց մեջ հայտնի են «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք»² հոգևոր երգերը՝ հայրենասիրական բուռն պգացմունքներով³:

Մեր պարականոն կամ անվավեր կոչված շարականների մեջ, այբուբենի կարգով գրված, ծավալով բավականին մեծ, Վար-

դանանց նվիրված ուրիշ մի զեղեցիկ շարական ևս կա «Անթառամ սիրոյ ծնունդք» վերնագրով: Հովհաննես Սարկավազ վարդապետի և Ներսես Շնորհալու վերևում հիշված շարականները մեր հին գրականության մեջ հայտնի են և մտել են ժամակարգության մեջ: Սակայն պարականոն շարականների մեջ ընկած այս թե՛ արժեքավոր պոեմը, և թե՛ նրա հեղինակը դժբախտաբար մինչև օրս մնում են անհայտության մեջ և շին ուսումնասիրված:

Բանասեր Սահակ վարդապետ Ամատունին 1894 թվականին «Արարատ» ամսագրի «Շարականների ուսումնասիրությունն» ընդհանուր խորագրի ներքո իր հոդվածներից մեկում⁴ փորձում է ցույց տալ, որ «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականի հեղինակը Հովհան Օձնեցին է, Այսպիսի մի կարծիքի հիմք են հանդիսացել Սարգիս Երեցի «Տօնացոյց»-ի հետևյալ խոսքերը. «Ձղևոնդեանց Անճառելի բանդ Աստուած», Վարդանանց «Անթառամ սիրոյ

¹ ՏԷ՞ն «Չայնրայ շարական», «Կաղարշապոտ», 1888 թ., էջ 487:

² Նույն տեղում, էջ 481—482:

³ Ք. Հակոբյան «Ավարայրի ճակատամարտին նվիրված Ներսես Շնորհալու երկու շարականները», «Ուղեգրական գրականություն», 1957 թ., Մ 6:

⁴ «Արարատ», 1894 թ., Մ 4, էջ 120—127:

ծնունդքն» Յոհաննու քահանայի է ասացեալ»⁵։ Ամատունին ենթադրում է, որ այս Հոհանը, Հովհան կամ Օհան Օձնեցիին է։

Բայց թե ինչու՞ Սարգիս երեցը չի ասում պարզապէս «Յովհան Օձնեցի» կամ «Յովհան կաթողիկոս», այլ՝ «Յովհան քահանայ», այս հարցին Սահակ Ամատունին պատասխանում է այսպէս. «Այս սխալանքը, եթե արել է մեր գրիչը, մենք այդ վերագրում ենք միայն այն դեպքին, որ ինչպես շատ գրիչներ ծանոթ չլինելով մեր ազգի մատենագիրներին իսկական անվան... մի բան արտագրելու ժամանակ շփոթել են իրար հետ և յնծայել մի գրվածք մյուսին, մանավանդ, եթե նրանց հեղինակները եղել են միևնույն անվան տեր մարդիկ»⁶։

Այնուհետև Ամատունին գտնում է, որ եթե Հովհան Օձնեցիին գրել է Ավագ կամ Մեծ տոների շարականները, Վարդանանց տոնն էլ փոքր տոներից չէ, ուստի պիտի ենթադրել, որ «Անթառամ սիրոյ ծնունդք» Վարդանանց շարականն էլ գրել է Հովհան Օձնեցիին։

Վերջապէս Սահակ վարդապետ Ամատունին այս շարական-պոեմը Հովհան Օձնեցուն վերագրելու նպատակով, մեջ է բերում Օձնեցու ճառերից և այս շարականից համապատասխան տեղեր, համեմատում դրանց նմանութունները, ոճը և հարազատութիւնը ցույց տալու համար։

Նախ պետք է ասել, որ Սարգիս երեցը գրագետ քահանա է եղել և ոչ աննշան գրիչ։ Եթե մեկ հոգեւորական գրում է Տոնացույց, փորձում է ցույց տալ մեր բազմաթիվ շարականների հեղինակները, դժվար թե նա լկարողանար տարբերել Հովհան քահանան և Հովհան Օձնեցին։ Բացի այդ, Օձնեցին հայտնի է նաև որպէս կաթողիկոս, եկեղեցական նշանավոր գործիչ ու հրապարակախոս, Ինչպիսի անտեղյակ գրիչ էլ լիներ արտագրողը, այնուամենայնիվ չէր կարելի շփոթել կաթողիկոսի և քահանայի անունները։

Եթե խոսքը միայն «Հովհան» անվան շփոթելու մասին է, ապա ինչպե՞ս հասկանալ քահանա և կաթողիկոս բառերի շփոթումը։

Բացի այդ, ինչու՞ անպայման կարծել, որ Սարգիս երեցի ասած Հովհանը ոչ թե Հովհան Մանդակունին է կամ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը կամ Հովհաննես Սարկավագը, որը Ղեռնդեանց էլ նվիրել է «Պայծառացան այսօր» հայտնի շարականը, այլ Հովհան Օձնեցիին է։

Այնուհետև երկրորդ ենթադրութիւնն էլ անհիմն է։ Ահա թե ինչու՞ Ժիշտ է, Հով-

հան Օձնեցիին գրել է «զկարգ Մեծ տօնիցն», բայց այս տոների մեջ չի մտնում Վարդանանց տոնը, թեև Հայ Եկեղեցին փոքր տոն չի համարել Վարդանանց օրը և միշտ տոնել է շքեղութեամբ ու հանդիսավորութեամբ, ինչպէս իրավացի կերպով նկատում է Ամատունին։

Հովհաննես Սարկավագ վարդապետից ու ներսես Շնորհալուց առաջ, Վարդանանց քաջերին նվիրված շարական հայտնի չէ, ուրեմն այս կարգի շարականները սկսվում են ժՔ դարից և հավանարար Վարդանանց տոնն էլ իր շքեղութիւնն ու հանդիսավորութիւնն ստացել է ժՔ դարից։

Այժմ տեսնենք, թե ո՞րքան նման և հարազատ են Հովհան Օձնեցու ճառերից և «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականից կատարված քաղվածքները։

«Օձնեցին,— ասում է Ամատունին,— առանց մի քայլ անգամ շեղվելու յուր պերճախոս լեզվից, յուր զեղուն բառ ու բանից և միանգամայն յուր քրիստոնեական բուռն սիրուց և վառ ոգևորութիւնից, եթե կարելի է այսպէս ասել, կազմել է յուր գրած շարականներից ճառեր, իսկ յուր գրած ճառերից՝ շարականներ»⁷։ Ահա այդ ճառերից ու շարականներից մի քանի նմուշ։

Ճառերից⁸

Շարականից

1. Տնկագործողին տնկեալ զդրախտն և ի նմա դնելով զմարդըն, հրամայեաց անդուստ վայելել նմա։

1. «Տնկագործ Ադին դրախտին, որ տնկեցեր յերկրի դխալն»։

2. «Գեղեցկագոյն, հաւատոյ ոտիւք առ ճշմարտութիւնն ի վերկանդենալ»։

2. «Տճնյմամբ վանայք ի կենցաղումս առ ի ստացումն փութացեալք երազաքայլ ոտիւք հոգւոյ»։

3. «Ի բաց վանել զլարութիւնն բանսարկուին և զքոյր տիեզերս հնազանդեցուցեալ ընդ առաքելական քարոզութեամբն»։

3. «Երկնաւոր թագաւորին զինուորեցալք արիարար առ ի վանումն բանսարկուին... նահատակալք քաջութեամբ արկից տապատ զմուրեհայսն»։

4. «Գնելով յիմաստութեանց մերոց պարսատիկս... ջաղխեսցուք զվեհագոյն... փնտսա անդամ... աւար առնելով և զերելով զհպարտացեալ նոցա խորհուրդս»։

4. «... Նորասջանը զարմանալիւօք ընտրես ծառայս քեզ և վկայս, և զործակցեալ նոցա ի մարտ զերես զամուրս և դիտորով զհպարտացեալ նոցա խորհուրդս»։

⁵ Ստեփկ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 185։

⁶ «Անտրոստ», 1894 թ., № 4, էջ 126։

⁷ Նույն տեղում։

⁸ Հովհան Իմաստասէր, 1883, Վենետիկ, էջ 67։

5. «Անյողգողգելի հաւատով զնորայն հիմնեցուցին զհկեղեցիք»:

5 Եւ... ամբացուցեր զհկեղեցի վկայից քոց բազմութեամբ ի թեզ յօգեալ առաքինեացաւ:

6. «Մեծագոչ հրնչմամբ աղաղակեմք ի յրնդհանուր... արարածոց տեսակս ասելով. Օրհնեցեք ամենայն գործք Տեառն զՏէրս»:

6. «Չայնեցեր զհեռացեայսն մեծագոչ փողոյն ձայնիւ գալ ի տաճար... ի սեանց եօթանց հաստատելոց»:

Համառոտակի քննենք այս 6 համեմատութիւններն առանձին-առանձին:

Առաջին համեմատութեան մեջ քաղվածքներն իրենց մտքերով բոլորովին տարբեր բաներ են: Ծառից մեջ բերվածի իմաստն այն է, որ Աստված տնկել է դրախտը մարդու համար և զնեղով այնտեղ նախամարդուն, այսինքն Ադամին, հրամայել է վայելել ու ապրել:

Իսկ շարականից մեջ բերվածն, ինչպես տեսանք, բոլորովին այլ իմաստ ունի: Այստեղ պոեմի հեղինակն արդեն նկատի ունի ոչ թե դրախտն ու Ադամը, ինչպես ճառից մեջ բերվածը, այլ Հիսուսը, որ նա միաժամանակ Աստված է մարդ է, որ նա այդ դրախտ երկրում տնկել է Իր խաչը: Իր հոժար կամքով բարձրացել է այդ խաչի վրա և դարձել փոխարեքական մարդով ասված՝ «պտուղ հասարակաց»:

Ավելի պարզ դարձնելու համար մեր առարկութիւնն այս համեմատութեան դեմ, մեջ բերենք շարականի 20-րդ տունն ամբողջապես, որից կատարված է մեջբերումը: Բանաստեղծը, դիմելով Հիսուսին, ասում է. «Մորենեաց եզեր մշակ Աստուած և մարդ համանցամայն, ի պողարեր փոխեալ բնութիւն, ի բնութենէ ատարացեալսդ. Տնկազործ Ադին դրախտին, որ տնկեցեր յերկրի զխաչն, Եւ բարձրացար կամաք ի նա, եղեալ պտուղ հասարակաց»:

Երկրորդ համեմատութիւնն իմաստի ու հարազատութեան տեսակետից նույնպես անհաջող է: Եթե առաջին համեմատութեան համար բանասերին հիմք են հանդիսացել միայն «տնկազործ» և «դրախտ» բառերը, ապա այստեղ միայն «տոտիք» բառն է: Ծառի մեջ այլաբանորեն ասված է, որ հավատի ոտքով է դիմված զեպի ճշմարտութիւնը, իսկ շարականի մեջ դարձյալ բոլորովին այլ է փոխարեքական միտքը: Այս-

տեղ հեղինակն ասում է, որ Վարդանանց նահատակները իրական կյանքում վառվում էին երկնի ծածուկ գանձից բաժին ստանալու տենչանքով և այն՝ այդ բանական գանձը ստանալու համար, հոգու արագաքայլ ոտքերով դիմում էին զեպի մահը: զեպի երկինքը: Համեմատութիւնները ոչ միայն բոլորովին այլ իմաստ ունեն, այլ ճառում քաղվածքի միտքը վերացական է ու անորոշ, իսկ շարականում՝ կոնկրետ ու որոշակի: Խոսքը վերաբերում է միայն Վարդանանց, այնպես որ այստեղ ևս ոչ մի հիմք չկա «Անթառամ սիրոյ ծնունդը» պոեմը վերագրելու Հովհան Օձնեցուն:

Երրորդ համեմատութիւնն էլ իր էությունը նույնն է, ինչ որ երկրորդը: Այստեղ էլ նման է միայն «բանասարկութիւն» բառը, որիչ ոչինչ: Ծառից արված քաղվածքի իմաստն այն է, որ առաջայնեքի քարոզչների միջոցով ամբողջ տիեզերքն հնազանդվել է քրիստոնեութեան վարդապետութեան և դրանով վանվել, հեռացվել բանասարկութիւնից: Այսինքն սատանայի լարութիւնը: Բոլորովին ուրիշ իմաստ ունի շարականի մեջբերումը: Այստեղ բանաստեղծը երգում է, որ Ավարայրի հերոսները արիաբար զինվորագրվեցին Երկնավոր Քաղաքին՝ բանասարկութեանը: Հազկերտին երկրից վանելու և մարդկանց մոլորութիւնից փրկելու համար: Մի տեղ խոսքը առաքելական քարոզի, իսկ մյուս տեղ դարձյալ Վարդանանց զինվորների մասին է: Սա էլ չի կարող ապացույց լինել, որ այդ շարականը գրել է Օձնեցին:

Հետևյալ համեմատութեան մեջ ճառից կատարված քաղվածքը այնքան շատ է կտրատված ու բազմակետ դրված, որ ընթերցողը դժվարանում է նույնիսկ ըմբռնել, թե ինչ է ուղում ասել ճառի գրողը: Այս տողերի իմաստն, ըստ Օձնեցու, այն է, որ թշնամու գաղափարախոսութիւնն ու խորհուրդը կզննք մեր իմաստութեան պարստիկը և շարդ ու փշուր կաննք այն, ավար առնելով ու գերի վերցնելով նրանց հպարտացյալ խորհուրդները: Այստեղ դարձյալ խոսքը քրիստոնեութեան վարդապետութեան և նրա թշնամի խորհուրդների մասին է ընդհանրապես: Մինչդեռ շարականի քաղվածքի իմաստն է՝ Քրիստոսը զարմանալի կերպով լավ է ընտրել Իր հավատասեր վկաներին՝ այսինքն Վարդանանց մարտիկներին: Ինքը՝ Քրիստոսը, Ավարայրի ճակատամարտում գործակցել և ոգնել է այդ մարտնչողներին և նվաճել ու գերել են թշնամու ամրոցներն ու խորհուրդները: Դարձյալ նմանութիւնը միայն նման, բայց այլ առումով գործածված մի երկու բառի մեջ է, ուրիշ ոչինչ:

«Ստեփան վարդապետ Ամատունի. «Պարականոն շարականներ», էջ 287—288:

Նախաձեռնողին համեմատութեան՝ ճառի քաղվածքի միտքն այն է, որ ընդհանրապես անհոգողողը հավատով է հիմնվել Քրիստոնեական Եկեղեցին. իսկ շարականի այդ երկու տողն ասում են, որ Հիսուսը Րր վերահիշյալ վկաների՝ Վարդանանց մարտիրոսների բազմութեամբ ոչ թե նոր է հիմնել, այլ ավելի մանրացրել ու անսասան է դարձրել այդ Եկեղեցին:

Վերջապես, ոչ մի նմանություն և հարազատություն չկա նաև վեցերորդ համեմատության մեջ, ուր ըստ Ամատունու՝ Օձնեցիին ճառերից կազմում է շարականներ և վերջիններիցս էլ՝ ճառեր: Այստեղ, ճառի մեջ Օձնեցիին ասում է, որ ընդհանուր մարդկութեան հետ միասին մենք ևս մեծագույն հնչմամբ կոչ ենք անում աշխարհին, թե՛ օրհնեցեք Տիրոջը և նրա բոլոր գործերը, իսկ քանաստեղծը շարականի մեջ դիմում է ոչ թե ամբողջ աշխարհին, այլ միայն Հիսուսին, որ նա իր մեծագույն փողի ձայնով կանչել է Վարդանանց նահատակներին յոթ անսասան սյունների վրա հաստատված երկնային տաճարը, որ տուրխանան զինով բանին», ի հեծուկս անզգամ, անհավատ թշնամիների...:

Այսպիսով բանասեր Սահակ վարդապետ Ամատունու ենթադրություններն ու կատարած համեմատությունները համոզեցուցիչ չեն, հետևաբար ոչ մի հիմք չկա «Անթառամ սիրոյ ծնունդը» պարականոն շարական-պոեմը վերագրելու Բ դարում ապրած Հովհան Օձնեցի կաթողիկոսին:

Ապա, ո՞վ է վերջապես այս հոգևոր և հայրենասիրական գեղեցիկ պոեմի հեղինակը, որ մինչև օրս մնացել է անհայտ:

Նախքան այդ, համառոտ և ընդհանուր գծերով ծանոթանանք այս անվավեր շարականի բովանդակության և ապա փորձենք ցույց տալ, թե ո՞վ է հեղինակը:

«Անթառամ սիրոյ ծնունդը» բառերով սկսվող պոեմը գրված է այբուբենի կարգով, քաղկացած է 36 տնից, ամեն տունը՝ շորս տողից և անհանգ, քառանդամ տասնվեց վանկանի մի ոտանավոր է: Այս գործի հեղինակն էլ սնորահրաշ պսակաւորս և «Արիացեալք» շարականների նման դիմում է Վարդանանց հերոսներին երկրորդ և ապա երրորդ դեմքերով, բայց իհարկե ոչ անհատապես, այլ ընդհանուր ձևով: Ինչպես օրինակ՝

«Ընդ պարզևին ամփոփեցայք զպարզևիլ
 փարթամութեանն,
 Անկապուտ հաստատութեան ամամբ եղէք
 երջանկացեալք»:

Դարձայք դարձումն գովելի անստերիւր
 ճանապարհաւր:

Այս ձևով է բանաստեղծը դիմում Ավարայրի հերոսներին, փառաբանում է նրանց, որ ընկել են մեծ պատերազմում, բայց անպարտելի ու անմահ են, շնայած ըմպել են մահվան բաժակը, մկրտվել են իրենց արամբ, բայց վանել են հայրենի երկրից Հազկերտի խաբուսթյունն ու բռնութիւնը և լուծել խավարը:

«Ընդ մեծ պատերազմին նախանձեցայք ի պատարագ,
 Զփրկականն ըմպել զբաժակ և մկրտել արեամբ ձերով:
 Ի քաութիւն մոլորութեանն և ի լուծումն խաւարի:
 Որ բռնութիւն լարասիրին խաբէութեամբ հաւանեցոյցս»:

Շավարշան դաշտում Վարդանանք անհավասար կռիւի են բռնվում անօրին թրշնամու հետ, որով և վերջ են դնում խաբերս և նենգ ախույանի գաղտնի որոգայթներին:

«Թշնամեացն անօրինաց ընդդիմացայք ի պատերազմ
 Զգաղտնիս որոգայթիցն նահանջումն առեալ ի վերջս»:

Շարակյանի հեղինակը այդ պատերազմում ընկած մարտիկներին որակում է որպես «լուսատու խաւարելոց և այցելու մոլորելոց», որոնք որպես օտերգակն արդարութեան մաշել են մահվան ստվերը «ի տեսակէ ազգի մարդկանս»:

Առանձնապես աչքի է ընկնում այս սյունի՝ Մ տառով սկսվող 14-րդ տունը: Այստեղ հեղինակը երգում է հայ ժողովրդի ցրված, վարատված հարազատ դավակներին, որոնք հավաքվել են Արտազ գավառի Շավարշան դաշտը՝ դառնաթույն օձի զլուխը չախչախելու որպեսզի փրկեն Եկեղեցին ու Հայրենիքը, նրա մշակույթն ու արատությունը: Պոեմի մինչև 17-րդ տունը բանաստեղծը հոգնակի ձևով է դիմում Ավարայրի քաջերին ու փառաբանում: Այնուհետև ձ տառով սկսվող տնից մինչև Զ տառը, այսինքն ինը տուն, ըստ երևութիւն վերաբերում են զորագլուխ Վարդանին, ուր հեղինակը խոսում է եզակի թվով և երկրորդ դեմքով, ինչպես ներսես Ենդրհայո, սնորահրաշ պսակաւորս շարականը: Ահա այդ ձևով դիմումներից մի նմուշ:

«Ըմարտութիւն և ճանապարհ ուղևորաց առ քեզ անձանց...»

10 «Արարատ», 1954, № 4, էջ 120:

...Ուսուցիչը ամենեցուն՝ արիանալ ընդ դէմ մահու...

...Առաջին պսակաւորդ, յորգորիչ զանդիտողաց.

Ի շարաշար սպառնալիաց և յերկիւղ մահաբերոցս:

Այնուհետև պոեմի մնացած տաս տունը հոգնակի երրորդ դեմքով վերաբերում է այն բոլոր նահատակներին, որոնք ընկել են մարտի դաշտում.

«Ջախեցին գրանասարկուն և զընդ նովա իշխանութիւնս...

... Ռամկական ազդ աշխարհի եղեն՝ երկնի քաղաքացի...»

Ըստ քանաստեղծութիւն վերջին տների, Վարդանանց կտրիճներից ամեն մեկը Հայրենիքի ու ազգային մշակութիւթի ազատութիւն համար հոժարակամ գրկել է մահը, որոնք իրենց վերաբերով ու ցալով օգուտ են բերել հայ ժողովրդին.

«Իրաքանչիւր վկայիցն առանձնակի արժարութեամբ

Հասարակաց բերին աւգուտ, վիրաւք, ցաւոց և տանջանաց»:

«Անթառամ սիրոյ ծնունդք» պարականոն շարականի կառուցվածքը, ոճը, այբբենական կարգը, կոկիկ ու մաքուր լեզուն, պատկերներն ու հայրենասիրական մոմենտները շատ ընդհանուր նմանութիւններ ունեն ներսես Շնորհալու «Նորահրաշ» և «Արիացեալք» շարականների հետ: Բացի այդ, այս պարականոն հոգևոր երգը արվեստի հնարանքների տեսակետից էլ շատ նման է Շնորհալու «Այսօր անճառ», «Աստուած անեղ», «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» հոգևոր երգերին: Այժմ փորձենք ցույց տալ այդ նմանութիւնները և միատեսակ ոճը.

«Անբառամ սիրոյ ծնունդէ»-ի ճիւղերուց տնից

Ա. «Երկնաւոր թագաւորին՝ զինուորեցալք արիաբար...»

«Անբառամ»-ի շորճուրդ տան վերջին տողը

Բ. «...Պայծառացեալ արեամբ ձերով՝ ընծայեցաք հանդիսազրին»:

«Անբառամ»-ից

Գ. ...և ձերով հեղմամբ արեամբ

«Նորահրաշ»-ից

Ա. «Երկնաւոր թագաւորին զինուորեցալք արիաբար...»

«Նորահրաշ»-ի ինքնճուրդ տան նույնպիսի վերջին տողը

Բ. «Ընդ նոսին պսակելով՝ ի յերկնաւոր հանդիսազրէն»:

«Նորահրաշ»-ից

Գ. առաջին տնում՝ «Վարդապետն ա-

յսակեցայք զեկեղեցի...»:

Դ. «Հալուս բարոյն տարիմամբ վերադարձայք ի ստորայնոցս»:

Ե. «...զփրկականն ըմպել գրածակ և մկրտեալ արեամբ ձերով...»:

Զ. «Նւրնթանալ պատրաստաբար առ զօրազլուխն առաքինեաց»:

Է. «...ամենայնի յառաջացեալ և առնուանեալ հիմն և աւարտ»:

Ը. «Ուսուցիչը ամենեցուն արիանալ ընդդէմ մահու»:

Թ. «Ռամկական ազդ աշխարհի եղեն՝ երկնի քաղաքացիք»:

Փ. «Երրորդութեանդ նուագիչք զերեքսրբեան փառատրութիւն»:

բեամբդ քո՝ պսակեցիք զեկեղեցի»:

Երկրորդ տնում՝ «...Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ»:

Վեցերորդ տնում՝ «Խաչելոյն վկայ եղեալ՝ պսակեցաւ արեամբն իւրով»:

Դ. «Հական բարոյն դիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ»:

Ե. զփրկականն ըմպել գրածակ՝ և մկրտեալ արեամբն իւրով»:

Զ. «Նորահրաշ պսակաւոր և զօրազլուխ առաքինեաց»:

Է. «...յառաջեալ յամենեցունց զլուխ և աւարտ մարտիրոսաց»:

Ը. «Վառեցար զինուհոգւոյն արիաբար ընդդէմ մահու»:

Թ. «Ռամկական խումբ հաղարաց և երեսնից թիւ ընդ վեցից»:

Փ. «Պսակեցեալ ընդ անմարմոցն Երրորդութեանն երգել զփառս»:

Այսպիսի նմանութիւնները, ինչպես տեսնում ենք, տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնութիւնները, շեն վերջնում Վարդանանց նվիրված այս երկու շարականներով գրանքակնքախ են Շնորհալու նաև մյուս՝ այբբենական կարգով գրված «Այսօր անճառ», «Աստուած անեղ», «Առաւօտ լուսոյ» և այլ պոեմներում, Մի երկու օրինակ էլ բերենք այս գործերից, համեմատենք «Անթառամ սիրոյ ծնունդք» անվանեք շարականի հետ.

«Անբառամ սիրոյ ծնունդէ» պոեմից

Ա. «Բանին շօր բարբառոյ»:

Բ. «Ղօղեալ սարսեաց յիմարութիւն»:

«Այսօր անճառից»

Ա. «Բանին շօր փառաց լուսոյ»:

Բ. «Ղօղեալ յերկիւղ րրտանց հոսման

շարականը իր մեծ ծավալի պատճառով է հանվել ժամակարգությունից, որովհետև մի անգամից 36 տնից բաղկացած մի շարական երգելու համար շատ երկար ժամանակ է պահանջվել: Հավանաբար Շնորհալու մահից մեկ կամ երկու դար հետո, Շարակնոցը խմբագրող եկեղեցական հայրերը համեմատել են Վարդանանց նվիրված «Նորահրաշ պատկառութիւնը» և այս շարականը, նախապատվութիւնը տվել են «Նորահրաշ»-ին, որը համեմատաբար կարճ է, բովանդակութեամբ ավելի կուռ, իսկ արվեստով, մանավանդ բանաստեղծական թափով ավելի ուժեղ ու

ազդեցիկ: Բացի այդ, պարականոն շարականների մեջ շատերը կան, որ պատկանում են Շնորհալուն, ինչպես օրինակ՝ Արզար, Տրդատ թագավորներին, Որդվոց որոտման, Համորեն առաքելոց, Գևորգ և Սարգիս գործարենքին նվիրված և ուրիշ շարականներ: Իսկ ինչ վերաբերում է մեզ զբաղեցնող «Անթառամ սիրոյ ծնունդը» շարականին, դա մեր հոգևոր երգերի մեջ մի զեղեցիկ հայրենասիրական, հոգևոր մարտական բանաստեղծութիւն է, որն ից արժանի տեղը պետք է վերագտնի շարակնոցի նոր հրատարակութեան ղեկավարում:

